Արձանագրություն N 2

<<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով հայտերի բացման նիստի

ք. Երևան 24 օգոստոսի, 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյան
/ԳՊ/ԳԱՊ/՝
Հանձնաժողովի անդամներ
/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Կարապետյան
/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Աբրահամյան
/ԳՊ/ԲԱ/՝ Ռ. Աջամօղլյան
/ԳՊ/ԲԱ/՝ Ն. Գալոյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ Վ. Ղազարյան

1. <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2017թ.-ի օգոստոսի 24-ին, ժամը 11:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1	<<Յասոն>> ՍՊԸ	ք.Երևան, Վրացական 16
2	ԱՁ Արման Ասմանգուլյան	ք. Երևան, Ներսիսյան 1, 17
3	<<Հայկարլի>> ՍՊԸ	ք. Երևան, Կիևյան 18/6
4	<<Բլանկիրատ>> ՓԲԸ	ք. Երևան,Պ. Սևակի 47

3. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Յասոն>> ՍՊԸ-ի և <<Հայկարլի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ Արման Ասմանգուլյան ԱՁ-ի և <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերի ապահովման տուժանքի մասին համաձայնագրերի ամսաթվերը լրացվել են <<24.08.2017թ.>>, սակայն տվյալ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են 22.08.2017թ.:

5. Ելնելով հանձնաժողովի առջև ծագած հարցի բնույթից, հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ՀՀ ՖՆ պարզաբանում ստանալու համար՝ արդյոք նշված դեպքը իրավական հիմք է հանդիսանում մասնակիցների կողմից ներկայացված հայտերի մերժման համար:

6. <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել ՀՀ ՖՆ պատասխանը ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

<<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով հայտերի բացման նիստի շարունակություն

ք. Երևան

01 սեպտեմբերի, 2017թ.
Ժամը՝ 10:00

7. Հանձնաժողովն արձանագրեց, որ ՀՀ ՖՆ պարզաբանումները ներկայացվել են 30.08.2017թ. թիվ 27-1/15842-17 գրությամբ (ՀՀ ԱՎԾ-ն ստացել է 31.08.17թ., պատճեն կցվում է):

8. Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ-ի կողմից ներկայացված պարզաբանումները, հանձնաժողովը որոշեց.

- <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի և Արման Ասմանգուլյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, քանի որ բովանդակային առումով կատարվել են տուժանքի մասին համաձայնագրի լրացման պահանջները, ինչպես նաև այն, որ հիշյալ համաձայնագրերում նշված ամսաթվերը չեն կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակիցներից հայտի ապահովման գանձման գործընթացին:

9. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Գնման առարկայի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Չափման միավոր*	*Քանակը*	*Գնման առարկայի նախահաշվային գին*	*Մասնակցի անվանումը և Առաջարկված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*							
					<<Յասոն>> ՍՊԸ		ԱՁ Արման Ասմանգուլյան		<<Հայկարլի>> ՍՊԸ		<<Բլանկիրատ>> ՓԲԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ	առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ	առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ	առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (Շրջանառության գիրք (մտից))	հատ	12	43200	19800	23760	30000	36000	-	-	21600	25920
2	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (<<Հաշվետվություն առևտրի շրջանառության մասին>>, Ձև 1-առևտուր /փոքր/)	հատ	43088	193896	124500	149400	159425	191310	165800	-	129264	155116.8
3	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (Հարցաթերթ)	հատ	3200	290240	284000	340800	304000	364800	338900	-	246400	295680

4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (Օրագիր)	հատ	3200	435520	428000	513600	432000	518400	491300	-	369600	443520
5	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (<<Որտեղ և ինչպես են կիրառվում տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները>> գրքույկ (գունավոր, կավճապատ))	հատ	3461	138440	85000	102000	83000	99600	65800	-	51915	62298
6	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն (Տեղեկատվություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին, 11-ՀՄ)	հատ	27600	220800	160000	192000	245640	294768	217600	-	165600	198720

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

10. Հանձնաժողովը արձանագրեց, որ 3, 4 չափաբաժինների մասով բավարար գնահատված կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են տվյալ չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի որոշվեց կասեցնել նիստը և կազմակերպել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, որը տեղի կունենա ս.թ. սեպտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

<<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով հայտերի բացման նիստի շարունակություն

ք. Երևան 11 սեպտեմբերի, 2017թ.
Ժամը՝ 11:00

11. 2017թ. սեպտեմբերի 11-ին ժամը 11:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով ընթացակարգի 3, 4 չափաբաժինների մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկների նվազեցման նպատակով:

Բանակցություններին ներկայացել էր միայն <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի տնօրենը: Բանակցությունների արդյունքում <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ն 3, 4 չափաբաժինների համար ներկայացրեց նոր գնային առաջարկներ, համապատասխանաբար՝ 290240 և 435520 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

12. Ներկայացված հայտերի հիման վրա <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչել.

<<Յասոն>> ՍՊԸ -ին՝ 1, 2, 6 չափաբաժինների մասով

<<Բլանկիրատ>> ՓԲԸ -ին՝ 3-5 չափաբաժինների մասով

- 2- րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել.

<<Բլանկիրատ>> ՓԲԸ -ին՝ 1, 2, 6 չափաբաժինների մասով

<<Յասոն>> ՍՊԸ -ին՝ 3-4 չափաբաժինների մասով

<<Հայկարլի>> ՍՊԸ –ին՝ 5 չափաբաժնի մասով

- 3- րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել.

Արման Ասմանգուլյան ԱՁ -ին՝ 1-5 չափաբաժինների մասով

<<Հայկարլի>> ՍՊԸ –ին՝ 6 չափաբաժնի մասով

- 4- րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել.

<<Հայկարլի>> ՍՊԸ –ին՝ 2-4 չափաբաժինների մասով

Արման Ասմանգուլյան ԱՁ -ին՝ 6 չափաբաժնի մասով

<<Յասոն>> ՍՊԸ -ին՝ 5 չափաբաժնի մասով

13. Հանձնաժողովը որոշեց <<ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՇՁԲ-2017/2>> ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը նշանակել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից գնահատման թերթիկները քարտուղարին ներկայացնելու հաջորդ աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Հարությունյան
ԳՊ/ԳԱՊ

Անդամներ՝ ---------- Ա. Կարապետյան
ԳՊ/ԳԱ

ԳՊ/ԳԱ ---------- Ա. Աբրահամյան

ԳՊ/ԲԱ ---------- Ռ. Աջամօղլյան

ԳՊ/ԲԱ ---------- Ն. Գալոյան

Քարտուղար՝ ---------- Վ. Ղազարյան
/ԳՊ/Միմ/